

ԼՈՒՄԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿԱՆԱՆՑ ՎԻՃԱԿԸ ՌԵՁԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1920-ական թվականների սկզբին Իրանում լիարժեք իշխանություն հաստատելուց և երկրի կայունությունն ապահովելուց հետո՝ Ռեզա շահ Փահլավին ձեռնամուխ եղավ մի շարք միջոցառումների, որոնք ուղղված էին Իրանի արդիականացմանը և արևմտականացմանը:

Ռեզա շահի կարծիքով՝ Իրանի արդիականացման ճանապարհին առկա էր երեք կտրուկագույն խնդիր՝ հոգևորականության ավանդական ազդեցությունը, բնակչության անգրագիտությունը և կամանց կախյալ վիճակը: Ուստի բնակչության կրթական մակարդակի բարձրացումը և կամանց վիճակի բարելավումը սոսկ ինքնամապատակ չէր, այլ հոգևորականության ազդեցությունը թուլացնելու լավագույն միջոց:

Իրանի արդիականացումն ու արևմտականացումը իրողություն դարձնելու համար անհրաժեշտ էր նախ թուլացնել հոգևորականության ազդեցությունը: Ռեզա շահը անհամատեղելի էր համարում շիիզմի ուսմունքը երկրի առաջընթացի հետ, այդուհանդերձ, հատկանշական է, որ նա երբևիցե արհամարհական կամ թշնամական վերաբերմունք չի ցուցաբերել կրոնական հավատալիքների հանդեպ:² Շահը ձգտում էր ոչ թե թուլացնել կրոնի հիմքերը, այլ նվազեցնել հոգևորականների ազդեցությունը, որով նա ցույց էր տալիս ինչպես իր ժողովրդին, այնպես էլ իսլամ դավանող այլ ազգերին, որ շիիզմը ձեռք է բերել ակնհայտ անձնական համոզմունքների բնույթ և այլևս չպետք է խառնվի հասարակական և միջազգային հարաբերություններին:

Դարեր շարունակ Իրանի կանայք իրենց կյանքն անց են կացրել անդարումում, այսինքն՝ հարեմում, այլ օրինական կամանց և հարճերի, իրենց երեխաների ու ծառաների հետ: Նրանց կյանքն անցնում էր կենցաղային պարտականություններ կատարելով և երեխաներին դաստիարակելով, որը սահմանափակում ուներ, քանի որ տղա երեխաները, որոշակի տարիքի հասնելով, հեռանում էին անդարումից՝ ուսում ստանալու համար: Իրանի կանայք արական սեռի ներկայացուցիչներից կարող էին շփվել միայն իրենց ամուսինների և ամենամոտ ազգականների հետ: Կամանց շրջանում տարածված զվարճանքներից էին վախադարձ հյու-

ընկալությունները և հասարակական բաղնիքը, ուր նրանք այցելում էին որոշակի օրեր:

Այդ ամենը մատնանշում էր հասարակությունում կանանց մեկուսացված լինելու հանգամանքը: Ուստի, եթե շահը ցանկանում էր արևմտականացնել Իրանը, ապա նա պետք է վերափոխեր կանանց կախյալ վիճակը՝ տալով նրանց օրինական և սոցիալական հավասարության կարգավիճակ:

Կանանց վիճակը բարելավելու համար Ռեզա շահը կարևորում էր առաջին հերթին նրանց կրթական մակարդակի բարձրացումը, որը կանանց հմարավորություն կտար դառնալ հասարակության լիարժեք անդամ և կնպաստեր նրանց ինքնագիտակցության բարձրացմանը:

Չնայած աղջիկների համար առաջին դպրոցը բացվել էր 1897թ., սակայն միայն Ռեզա շահի կառավարման շրջանում էր, որ կրթությունը պարտադիր դարձավ նաև աղջիկների համար: Այդուհանդերձ, նրանց ուսումնական ծրագրերում կային որոշակի տարբերություններ: Որոշ ճշգրիտ առարկաների փոխարեն աղջիկները անցնում էին կարուճակ, նկարչություն, տնարարություն և երեխաների խնամք:³

1934թ. կանանց տրվեց բարձրագույն կրթություն ստանալու իրավունք: Նրանք կարող էին ընդունվել Համալսարան, Ուսուցիչների բարձրագույն դպրոց կամ Բուժքույրության տարբեր քոլեջներ: Այդ շրջանում գոյություն ունեւր նաև երկամյա մի ծրագիր այն աղջիկների համար, ովքեր չէին ցանկանում բարձրագույն կրթություն ստանալ: Այն ներառում էր ձեռքի աշխատանք, տնային տնտեսություն, երեխաների և առողջության խնամք:

Իրանում կանայք կարող էին տանից դուրս գալ որոշակի ժամերի և չէին կարող այցելել հասարակական վայրեր: Միայն 1928թ. նրանց իրավունք տրվեց հաճախելու կինոթատրոններ և սրճարաններ:⁵

1932թ. Թեհրանում կայացավ Արևելքի կանանց համագումար, որը նախագահում էր շահի ավագ դուստրը, որը 2 տարի անց դարձավ Կանանց առաջին ակումբի նախագահ: Ի դեպ, այն առաջինն էր կանանց նմանատիպ ակումբներից և միություններից:

Իրանի կանանց կախյալ վիճակի չափանիշ էր դարձել նաև չադրան, որը ծածկում էր նրանց ոտքից գլուխ՝ քաքցնելով անհատական հատկանիշները և միատեսակ դարձնելով բոլորին: Այն ուներ ոչ միայն հագուստի նշանակություն, այլև հանդես էր գալիս որպես կնոջ մեկուսացման և նրա բացառման խորհրդանիշ հասարակությունից: Հատկանշական է, որ կրոնական վաքքամասնությունները չեն ենթարկվել այս սահմանափակումներին:⁶

Արդեն 1920-ական թթ. նկատվում էին որոշ վտվտխություններ, սակայն երբ հարևան Աֆղանստանի Ամանուլլահ թագավորը կտրուկ

բարեխիտումների պատճառով կորցրեց իր գահը, Իրանում նոր շարժումը որոշակի նախանջ ապրեց։⁷

Սակայն, 1930-ական թթ. արդեն բարձր խավի կանայք տանը կրում էին եվրոպական հագուստ, բանակի սպաներին չէր թույլատրվում չադրայով կանանց հետ փողոց դուրս գալ, պետական ծառայողների կանայք ևս պետք հետևին նորաձևությանը։⁸

Կանանց վիճակի բարելավման գործընթացը ակտիվացավ հատկապես 1934թ., երբ Ռեզա շահը այցելեց Թուրքիա, որտեղ Մուստաֆա Զեմալ Աթաթյուրքը նմանատիպ քաղաքականություն էր անցկացնում։ Նույն թվականի աշմանը ուսուցչուհիներին և աշակերտուհիներին արգելվեց չադրա կրելը։⁹

Ի վերջո, 1936թ. հունվարի 8-ը Իրանի կանանց կյանքում դարձավ շրջադարձային օր, երբ Ռեզա շահը Թեհրանի բարձրագույն դպրոցի շրջանավարտներին վկայականներ հանձնելու նպատակով ներկայացավ իր տիկնոջ և երկու ավագ դստերի հետ։ Ի դեպ, առաջին անգամ էր, որ թագավորական ընտանիքի կանայք ներկայանում էին հասարակությանը առանց չադրա՝ եվրոպական հագուստով։ Այդ օրը այդուհետ ճանաչվեց սրպես Կանանց տոն։¹⁰

Այդ միջոցառման ժամանակ Ռեզա շահը դիմելով կանանց՝ նշում էր, որ չափազանց ուրախ է տեսնել Իրանի կանանց, որոնք ուսման և ձեռք բերված գիտելիքների շնորհիվ կարողացան ճանաչել իրենց իսկական դիրքը և հասկանալ իրենց իրավունքներն ու արտոնությունները։ Նա նշում էր, որ Իրանի կանայք հասարակությունից մեկուսացված լինելու պատճառով հնարավորություն չեն ունեցել ցույց տալու իրենց տաղանդը և ունակությունները, ապա ավելացնում էր, որ ավելի ճիշտ նրանք հնարավորություն չեն ունեցել՝ իրականացնելու իրենց պարտականությունները սիրելի հայրենիքի և ժողովրդի հանդեպ ու ծառայելու իրենց երկրի բարօրությանը այնպես, ինչպես պետք է անեին։¹¹

Ռեզա շահը շեշտում էր, որ չպետք է անտարբեր մտնենալ այն փաստին, որ ազգի կեսը հաշվի չի առնվել, այլ խոսքերով ասած՝ երկրի աշխատուժի ուղիղ կեսը պարապուրդի է մատնվել։ Իր այդ խոսքերով Ռեզա շահը կրկին անգամ ապացուցում էր այն, որ նրա հիմնկան միտքը մարդկային ռեսուրսները հնրավորին չափ երկրի բարօրության համար օգտագործելն էր։

Ռեզա շահը նշում էր, որ կանայք երբեք մարդահամարի չեն մասնակցել, քանի որ նրանք առանձին համայնք են կազմել և չեն համարվել իրանական հասարակության մաս։ Միայն մեկ դեպքում են կանանց մարդահամարի մեջ ընդգրկել, երբ սննդի պակաս է եղել։ Նրանց հաշվի են առել, որպեսզի ապահովեն սննդի մատակարարումը։ Դիմելով կանանց, Ռեզա շահը նշում էր, որ նրանք պետք է ընդունեն հունվարի 8-ը

որպես շրջադարձային օր և օգտագործեն իրենց ընձեռված հնարավորությունը՝ երկրի առաջընթացի համար: Նա դիմում էր կանանց՝ շեշտելով, որ նրանք պետք է դառնան լավ ուսուցիչներ և դաստիարակներ լավ քաղաքացիներ: Նա ավարտել է իր խոսքը՝ նշելով, որ կրթված կանայք, այժմ տեղյակ լինելով իրենց իրավունքներին և արտոնություններին, կկատարեն իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:¹²

Այդ օրվանից կանայք իրավահավասար ճանաչվեցին տղամարդկանց: Չադրան արգելվեց:¹³ Ոչ մի խանութ չէր սպասարկում չադրա կրող կանանց, նրանք չէին կարող հաճախել հասարակական վայրեր և անգամ դուրս գալ փողոց:¹⁴ Չարմանալի չէ, որ շատերը չադրայի արգելքը համարում էին ոչ թե կանանց իրավունքների հավասարեցում, այլ ուստիկանական ճնշում:

Չադրայի արգելքը ֆինանսական խնդիրներ առաջացրեց չունեող խավի կանանց համար, քանի որ այն թույլ էր տալիս նրանց չեղզայ հագուստի մասին: Այդ էր պատճառը, որ կառավարությունը չունեող կանանց 25.000 ֆունտ ստեռլինգ հատկացրեց՝ նոր հագուստ գնելու համար:¹⁵ Սակայն առաջին արդյունքները բարեհաջող չէին. բարձր խավի կանայք կարող էին հագնվել փարիզյան նորաձևությանը համապատասխան, իսկ մնացածը պետք է բավարարվեին նրանով, ինչ կարող էին գտնել շուկաներում: Իսկ հեհ և նորի խառնուրդը ոչ միայն տգեղ էր, այլև ակնհայտ էր դարձնում սոցիալական անհավասարությունը:

Չադրա կրելու արգելքը ցնցում էր Իրանի հասարակության համար: Կանայք չգիտեին, թե ինչպես պետք է իրենց պահեն տղամարդկանց շրջապատում, տեղյակ չէին էթիկայի կանոններին, նորաձևությանը: Իսկ տղամարդիկ զայրանում էին, երբ տեսնում էին իրենց կանանց և աղջիկներին առանց չադրա վաղոցում զբոսնելիս և առավել ևս երբ նկատում էին հայացքներ նրանց նկատմամբ:¹⁶

Այս նորամուծությունը տարբեր մտեցումների արժանացավ հենց կանանց կողմից: Տարեցների համար դա մի մղձավանջ էր, և նրանցից շատերը սկզբում անգամ հրաժարվեցին փողոց դուրս գալ: Երիտասարդների համար դա կյանքը փոխելու հույս էր, և նրանք ուրախությամբ ընդունեցին իրենց տրված ազատությունը: Դա առաջին սերունդն էր, որը դուրս գալով սնդարունից, ընկղմվեց ազատության մեջ: Դա բավականին դժվար ճանապարհ էր, քանի որ նրանք չունեին հետևելու օրինակներ:

Եվ չնայած, որ այդ քայլը հեղափախական էր և կարող էր հանդիպել դիմադրության, այնուամենայնիվ, լուրջ միջադեպեր չեն գրանցվել՝ գուցե քառօգյության արդյունավետության շնորհիվ:

Այդ շրջանում հոգևորականությունը խուսափում էր բացահայտ ընդդիմանալ Ռեզա շահի բարեփոխումներին, և միայն 1941թ. հետո

նրանք ակաիվացրեցին իրենց գործունեությունը:¹⁷ Հետագայում, Ռեզա շահի՝ գահից հրաժարվելուց հետո, հոգևորականության ազդեցության հետևանքով նրա որդին՝ Մոհամմեդ Ռեզա շահ Փահլավին փոխեց չադրայի արգելքը՝ ազատ ընտրության հնարավորություն ընձեռելով կամանց: Յածր խավի կամայք մորից սկսեցին չադրա կրել, քանզի այն քաջցնում էր նրանց մաշված հագուստը:¹⁸ Անգամ երիտասարդներից շատերը, ովքեր մախընտրում էին եվրոպական հագուստ, որոշ դեպքերում կրում էին չադրա, օրինակ՝ աղոթքի ժամանակ, սուրբ վայրերում կամ ավագ սերնդի ներկայացուցիչների ներկայությամբ:

Չնայած Ռեզա շահի կառավարման շրջանում կատարված ապշեցուցիչ փոփոխություններին՝ սխալ կլիներ ենթադրել, թե Շարիաթի՝ դարերով սրբագործված գաղափարները, որոնք իրանական հասարակության և մշակույթի հիմքն են կազմում, ամբողջովին անուշադրության էին մատնվել կամ փոխարինվել: Աշխարհիկ և Շարիաթի օրենքների միջև հնարավոր տարբերությունների խնդիրը կարգավորում էր Հիմնական օրենքի լրացումը, ըստ որի ոչ մի դեպքում օրենքները չպետք է հակասեին Շարիաթին:¹⁹

Այսպիսով, մոր ընդունված Քաղաքացիական օրենսգիրքը իրենից ներկայացնում էր Շարիաթի և արևմտյան աշխարհիկ օրենքների ընդհանրացում:

Ոչ մի այլ բնագավառում Շարիաթի գաղափարներն այնքան հարատև չէին, որքան ամուսնությանը, ապահարգանին, ընտանեկան հարաբերություններին, և բարոյականության դեմ հանցագործություններին վերաբերող օրենքներում:²⁰ 1926-1940թթ. ընթացքում այդ խնդիրներին վերաբերող օրենքները վախժվել են չորս անգամ՝ յուրաքանչյուր անգամ հեռանալով բուն Շարիաթի սկզբունքներից, սակայն մահ պահպանելով մախնական գաղափարների կորիզը:²¹

Օրենքով՝ ամուսնությունը դարձավ աշխարհիկ, սակայն ամուսնությանը վերաբերող օրենքների մեծ մասը ակնհայտորեն հետևում էին Շարիաթին:²² Այդուհանդերձ, ամուսնությունը և ապահարգանը օրինական չէին համարվում, եթե չէին գրանցվում քաղաքացիական գրասենյակներում: Քաղաքացիական գրասենյակներն էլ ամուսնության վկայական տալիս էին միայն այն դեպքում, եթե կատարվում էին օրենքի բոլոր պահանջները: Սակայն այդ օրենքը չէր կարող լիարժեք գործել, քանի որ գյուղական տարածքների մեծ մասում քաղաքացիական գրասենյակներ չկային:²³

Ըստ Շարիաթի՝ ամուսնական՝ մախսածեռությունը և բոլոր իրավունքները պատկանում են ամուսնուն, սակայն, եթե մահ ունի ավելի քան մեկ կին, ապա մահ բոլոր առումներով հավասարապես լավ պետք վերաբերվի նրանցից յուրաքանչյուրին:²⁴

Իրանցիների շրջանում բազմակնության սովորությանը զուգահեռ ընդունված էր նաև շիական սիդե հասկացությունը, այսինքն ժամանակավոր ամուսնությունը, որի տևողությունը կարող է լինել մեկ գիշերվանից մինչև ամբողջ կյանքը: Նոր ընդունված Քաղաքացիական օրենսգրքի 1075-77 հոդվածներով պահանջվում էր ժամանակավոր ամուսնությունների գրանցում: Սակայն այդ օրենքները լի էին հակասություններով և բացերով՝ սիդեի տևողությունը, նյութական հարցերը և ժառանգական իրավունքներին վերաբերող խնդիրները որոշելու համար:²⁵

Սակայն մինչև Ռեզա շահի իշխանության գալն արդեն նկատվում էր միակնության միտում, որը կապված էր տարբեր գործոնների հետ՝ Արևմուտքի ազդեցությունը, ժամանակակից կրթությունը, և վերջին, սակայն ոչ պակաս կարևորը՝ կենսամակարդակը:²⁶ Ռեզա շահը օրենքով չարգելեց բազմակնությունը, քանի որ դա համարում էր հակառակ Մուհամմադ մարգարեի օրենքին, որը թույլ էր տալիս 4 օրինական կին ունենալ:²⁷

Ինչ վերաբերում է ապահարգանին, այսա Քաղաքացիական օրենսգրքի 1133 հոդվածը նշում է, որ «ամուսինը կարող է բաժանվել կնոջից ցանկացած ժամանակ, իսկ կնոջը դրա համար որոշակի պատճառներ են պետք»²⁸, որը ճշգրիտ համապատասխանում է Շարիաթի օրենքներին: Սակայն համաձայն 1931թ. ընդունված նոր օրենքի՝ կնոջը տրվեց իրավունք դիմելու ամուսնալուծության, եթե նրա ամուսինը հարսանիքից առաջ չի տեղեկացրել կնոջը այլ կանանց մասին, կամ ամուսնացել է կրկին առանց նրա համաձայնության:²⁹

Շարիաթի օրենքին համապատասխան՝ Իրանի Քաղաքացիական օրենսգիրքը նշում է, որ օրինական երեխաները պատկանում են հորը, և ապահարգանի դեպքում խնամակալությունը հոր իրավունքն է: Ժառանգության, ամուսնի օգտագործելու և խնամակալության իրավունքին վերաբերող օրենքները մնամապես համապատասխանեցված են Շարիաթին:³⁰

1938թ. նոյեմբերի 24-ին Սեջլիսի ընդունած օրենքի համաձայն՝ ամուսնությունից առաջ բոլոր փեսացուներից և հարսնացուներից բժշկական վկայական էր պահանջվում:³¹ Բավականին հակասական է, բայց հարսնացուներն ազատված էին սեռական օրգանների հիվանդությունների բացակայության մասին վկայական ցույց տալուց: Սա ակնհայտ զիջում էր կանանց խոհեմությանն ու զգայունությանը, որոնք չէին ցանկանում զննվել տղամարդ բժշկի կողմից:

Ըստ քաղաքացիական օրենսգրքի 1041-43 հոդվածների ամուսնության համար օրինական տարիք էր սահմանվում տղամարդու համար՝ 18, իսկ կնոջ համար՝ 16 տարեկանը: Սակայն որոշակի պայմաններում և ծնողների համաձայնությամբ թույլ էր տրվում համապատասխա-

նաբար 15 և 13 տարեկանը: ³² Սակայն կրթական մակարդակի բարձրացման շնորհիվ նկատվում էր միակնության և ամուսնական տարիքի բարձրացման միտում:

Մի իրանցի իրավաբան այդ շրջանում նշում էր, որ կանայք իրավահավասար չեն տղամարդկանց միայն 5 կետում:

1. Տղամարդը կարող է մեկից ավելի կին ունենալ, այն դեպքում, երբ կինը այդ իրավունքը չունի:

2. Տղամարդը կարող է բաժանվել իր կնոջից ցանկացած պահին, այն դեպքում, երբ կինը կարող է դա անել միայն որոշակի պայմաններում:

3. Կինը ունի ավելի քիչ ժառանգական իրավունքներ քան տղամարդը, սակայն մյուս կողմից կնոջը ամուսնական օժիտի իրավունք է տրվում, և նա կարող է լիարժեք տնօրինել իր ունեցվածքը:

4. Ամուսինը ընտանիքի գլուխն է և ըստ օրենքի երեխաները նրան են պատկանում:

5. Կանայք չեն կարող քվեարկել կամ իրենց թեկնածություններն առաջադրել Մեջլիսի ընտրությունների ժամանակ: ³³

Սակայն կան նաև այլ տարբերություններ: Օրինակ՝ չնայած Քաղաքացիական օրենսգրքի 1062, 1064, 1070 հոդվածներով որպես ամուսնության անհրաժեշտ պայման պահանջվում էր երկու կողմերի համաձայնությունը, իրականում այդ պայմանները չէին իրագործվում և հիմնականում չէին էլ կարող իրագործվել: Դրա վառ ասպարեզ էր այն, որ մույն օրենսգրքի 1042-1043 հոդվածներով դատեր ամուսնության համար պահանջվում էր հոր թույլտվությունը, իսկ արու զավակների ամուսնության դեպքում դա չէր պահանջվում: ³⁴

Քաղաքացիական օրենսգրքի 1060 հոդվածի համաձայն իսլամ դավանող կինը չի կարող ամուսնանալ ոչ մահմեդականի հետ, իսկ մահմեդական տղամարդը կարող է ամուսնանալ ոչ մահմեդական կնոջ հետ, եթե նա կռապաշտ չէ: ³⁵

Ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1050, 1051 հոդվածների արգելվում էր բազմամուսնությունը, իսկ 942 և 1046 հոդվածներով տղամարդուն թույլ էր տրվում ունենալ 4 մշտական և անսահման քանակությամբ ժամանակավոր կին: ³⁶

Ամուսնացած զույգերի իրավունքները և պարտականությունները ըստ Քաղաքացիական օրենսգրքի 1102-1118 հոդվածների բաժանվում էին երկու տիպի՝ նյութական և ոչ նյութական:

Ամուսնու նյութական պարտականությունները և կնոջ իրավունքները սահմանվում էին որպես աջակցություն: Այն ներառում է սնունդ, հագուստ և տուն՝ կնոջ կարիքներին համապատասխան: Այնուամենայնիվ, միայն մշտական կինը աջակցություն ստանալու իրավունք ունի: ³⁷

Իսկ կնոջ նյութական պարտականությունները և ամուսնու իրավունքները սահմանվում էին որպես հնազանդություն: Հնազանդությունը լինում է ընդհանուր և հատուկ: Ընդհանուրի իմաստով այն ենթադրում է կնոջ բոլոր պարտականությունները, իսկ հատուկ իմաստով այն վերաբերում է ամուսինների իմաստի կյանքին:³⁸

Ամուսնության ոչ նյութական իրավունքները և պարտականությունները սահմանվում էին հետևյալ կերպ. «Ընտանիքի ստեղծումը հիմնվում է ամուսնու և կնոջ ներդաշնակ գոյակցության վրա» (Քաղաքացիական օրենսգրքի 1104 հոդված): Սակայն այդ ներդաշնակ գոյակցությունը չի քացառում ամուսնու գերակայող դերը ընտանիքում:³⁹

Ոգեշնչված իրենց՝ այս օրինական ազատությամբ և ժամանակակից կրթության շնորհիվ՝ Իրանի կանայք ավելի ու ավելի էին ներքաշվում իրենց երկրի կյանքի մեջ: Սկզբում կանանց կարիերայի հնարավոր միակ ուղին ուսուցչի մասնագիտությունն էր, սակայն այս դեպքում ևս նրանց աշխատավարձերը կիսով չափ պակաս էին տղամարդկանցից: 1938թ. ընդունվեց Աշխատանքային նոր օրենսգիրք, որի համաձայն՝ աշխատանքի ոլորտում կանայք տղամարդկանց հավասար իրավունքներ ստացան:⁴⁰

Հետո նրանց հնարավորությունն ընձեռվեց ստանալու բժշկի կամ բուժքրոջ, ապա լրագրողի մասնագիտություն, ինչպես նաև արտասահմանում ուսում ստանալու հնարավորություն: 1936 «Էմանսիպացիայից» հետո կանանց տղամարդկանց հավասար պայմաններով սկսեցին ընդունել Բարձրագույն ուսումնական հաստատություններ (սակայն նրանք լսարան էին մտնում տղամարդկանցից առաջ և հատուկ մուտքով):

Անգլո-իրանական նավթային ընկերությունը առաջիններից մեկն էր, որ ընդունեց կանանց աշխատանքի որպես մեքենագրուհիներ և քարտուղարուհիներ, սակայն շուտով այլ ընկերությունները ևս հետևեցին նրանց օրինակին, և կանայք վտխարինեցին տղամարդկանց այս ասպարեզում:⁴¹

Այս ամենի շնորհիվ կանանց հնարավորությունն ընձեռվեց՝ կիրառելու ստացած գիտելիքները և օգտագործելու իրենց ներուժը երկրի բարգավաճման համար: Կանանց իրավունքների հավասարեցումը ոչ միայն Իրանի սոցիալական բարեփախումների ցուցանիշն է, այլև այն նշանակում է նահապետական ընտանիքի վերափախումը և կանանց մասնակցությունը երկրի մշակութային և հասարակական կյանքին:

Հագուստի արևմտականացումը հետապնդում էր ոչ միայն կանանց փճակի բարելավման, հոգևորականության ազդեցությունը թուլացնելու նպատակ, այլ նաև հանդիսանում էր Ռեզա շահի կենտրոն-

ման ծրագրի լավագույն ապացույց: Ռեզա շահի կարծիքով միատեսակ հազուստը կներշնչեր բնակչությանը նաև միատեսակ մտածելակերպ:⁴²

Ռեզա շահի կառավարման շրջանի վերջում Արևմտադե Զուլեյկոյի օրենքների ազդեցությունը մարդկանց կյանքում զգալի էր, սակայն, իհարկե, ոչ այն աստիճանի, որ ներկայացվում է պատմական գրականության մեջ: Սոցիալական և մշակութային օրինակները վախճում էին քաղաքային բնակչության շրջանում, իսկ գյուղերում ավանդույթները փոփոխության նշույլ անգամ չունեին:⁴³ Օրենսդրական դաշտի վտակախորթությունները արտահայտում էին Ռեզա շահի ցանկությունը՝ արդիականացնել և աշխարհիկ ուղու վրա դնել Իրանի հասարակությունը՝ Իրանի միջազգային վարկանիշը բարձրացնելու և իր իսկ դիրքերը ամրապնդելու համար:

Այսպիսով, կանանց վիճակը բարելավելու՝ Ռեզա շահի ծրագիրը հետապնդում էր առնվազն երեք միմյանց վտիկապակցված առաջնակարգ նպատակ՝ արևմտականացնել Իրանը, թուլացնել հոգևորականության ազդեցությունը, օգտագործել կանանց ներուժը երկրի զարգացման ու առաջադիմության գործընթացում: Այս ամենով հանդերձ՝ Ռեզա շահը, որոշակի արտոնություններ չնորհելով կանանց, ձգտում էր ի դեմս նրանց ձեռք բերել սոցիալական հենարան՝ իր քաղաքականության իրականացման համար:

Չնայած բոլոր բարեփոխումներին, Ռեզա շահը չէր կարող եվրոպական ազդեցությունը առանց Իրանի ավանդույթներին և իրականությանը հարմարեցնելու տարածել երկրում, քանի որ հասարակությունը չէր կարող կտրուկ վերավախժվել պատմական այդպիսի կարճ ժամանակշրջանում:

STEPANYAN LUSINE

THE STATUS OF WOMEN IN THE PERIOD OF REZA SHAH PAHLAVI

Having undisputed political power, Reza Shah initiated a number of social reforms. Three facts, he saw, obstructed the way, Shia religion in its traditional form, illiteracy and the status of women. If, then, the Shah wanted to modernize Iran, he had to transform the inferiority, which was the women's fate in Muslim countries, into a status of legal and social equality.

So one of more spectacular and fundamental changes on the way of modernization, possibly was the emancipation of women. From January 8, 1936 a great step was taken, and women were regarded in law as being equal with men. The veil was strictly forbidden. It was, of course, not the discarding of the veil as an article of dress, but the veil as a symbol of edition of women from society.

One of the most important reforms was the new Civil Code, which reflected a new outlook in the official attitude towards principles pertaining marriage, divorce, family relations. Despite the changes of the Reza Shah period, the new Civil Code was a perplexing mismatch of the shariah and the western secular codes.

Due to the reforms of Reza Shah and inspired by their new legal freedom, Iranian women were entering more and more into life of their country.

By the end of the reign of Reza Shah the influence of the western-inspired reforms upon the lives of the people was considerable. But social and cultural patterns were changing among the urban population but in the village the age-old practices showed, no signs of disappearing.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. William S. Haas, Iran, Columbia University Press, New York, 1946, p.153.
2. William S. Haas, Iran, p.153.
3. Elwell-Sutton, Modern Iran, London, 1941, p.135, Տի'ւ Գաւհ Երվանդ Աբրահամյան, Iran Between Two Revolutions, Princeton University Press, Princeton, New Jersey, 1982, p.144.
4. George Lenczowski, Iran Under The Pahlavis, Stanford, California, 1978, p. 97, Տի'ւ Գաւհ Յ.Ա. Արաբաճեան., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), Москва., "Наука", 1991г., с.53, М.С. Иванов, Очерк истории Ирана, АН СССР, 1952г. стр. 343.
5. Elwell-Sutton, Modern Iran, p.121, Տի'ւ Գաւհ D. Bourke-Burrowes, Changes and development in Persia during Pahlavi Regime, Journal of the Central Asian Society, vol. XVIII, Part I, January, 1931, p. 46.
6. Elwell-Sutton, Modern Iran, p. 122.
7. Ibid., p.121, Տի'ւ Գաւհ' Journal of the Central Asian Society, vol. XVIII, Part I, January, 1931, p. 46, Иран; Очерки новейшей истории, 1976г. стр. 114.
8. Elwell-Sutton, Modern Iran, p.122, Տի'ւ Գաւհ' Joseph. M.Upton, The History of Modern Iran: an interpretation, Cambriedge, Massachussets, 1965, p. 62, Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions, p.144.
9. Peter Avery, Modern Iran, p. 291, Տի'ւ Գաւհ George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 97, Иран; Очерки новейшей истории, с. 127.
10. Elwell-Sutton, Modern Iran, p.122, Տի'ւ Գաւհ' Peter Avery, Modern Iran, p. 292, George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 98, p.34, Иран; Очерки новейшей истории, с. 20.
11. Elwell-Sutton, Modern Iran, p.122-123, Տի'ւ Գաւհ' Donald Wilber, Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran, New York, 1975, p.173-174.
12. George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 98.
13. Реза Годс, Иран в XX веке: Политическая история, Москва, "Наука", 1994г., с. 148, Տի'ւ Գաւհ' Joseph. M.Upton, The History of Modern Iran: an interpretation, p. 62, Дустов Дуст Каримович, Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX в.), Автореферат диссертации на соискание ученой

- степени кандидата исторических наук, М., 1989г., с.8, Ervand Abrahamian, *Iran Between Two Revolutions*, p. 144, З.А. Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с. 52.
14. Donald Wilber, Riza Shah Pahlavi, p.174, Sh'u fiwl' Peter Avery, *Modern Iran*, p. 292, Lewis V. Thomas and Richard N. Frye, *The United States and Turkey and Iran*, Cambriedge, Massachussets, 1952, p. 224.
 15. Elwell-Sutton, *Modern Iran*, p.123, Sh'u fiwl' Peter Avery, *Modern Iran*, p. 292.
 16. Manucher Farmanfarmaian and Roxane Farmanfarmaian, *Blood and oil: inside the Shah's Iran*, New York, 1999, p. 120.
 17. Дустов Дуст Каримович, Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX в.), с. 8.
 18. Manucher Farmanfarmaian and Roxane Farmanfarmaian, *Blood and oil: inside the Shah's Iran*, p. 120, Sh'u fiwl' Дустов Дуст Каримович, Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX в.), с. 8.
 19. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, Stanford, California, 1961, p. 77.
 20. Иран; Очерки новейшей истории, 76, Sh'u fiwl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.80.
 21. George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p.92 Sh'u fiwl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.80.
 22. Реза Годс, Иран в XX веке: Политическая история, с.142, Sh'u fiwl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.81.
 23. З.А. Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с.50. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.81.
 24. Коран, М. 1990, Сура 4, 24(20), с. 84.
 25. Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p.83, Peter Avery, *Modern Iran*, p. 296, George Lenczowski, *Iran Under The Pahlavis*, p. 92, З.А. Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с.49.
 26. Elwell-Sutton, *Modern Iran*, p.124, Sh'u fiwl' *The Middle East and North Africa*, 1964-65, London, p.26, William S. Haas, *Iran*, p.167.
 27. Коран, М. 1990, Сура 4, 3(3), с. 81.
 28. Elwell-Sutton, *Modern Iran*, p.124, Sh'u fiwl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 83, Ervand Abrahamian, *Iran Between Two Revolutions*, p.144, Иран; Очерки новейшей истории, с.121, З.А. Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с.49.
 29. William S. Haas, *Iran*, p.181-182, Sh'u fiwl' Peter Avery, *Modern Iran*, p. 290.
 30. Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с.49, Sh'u fiwl' Banani Amin, *Modernization of Iran: 1921-1941*, p. 84.
 31. Elwell-Sutton, *Modern Iran*, p.124-126.
 32. Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с.49.
 33. Elwell-Sutton, *Modern Iran*, p.125, Sh'u fiwl' William S. Haas, *Iran*, p.182, Peter Avery, *Modern Iran*, p. 292.

34. Banani Amin, Modernization of Iran: 1921-1941, p. 81, Sh'u fawl' Peter Avery, Modern Iran, p. 295-296, George Lenczowski, Iran Under The Pahlavis, p. 92, Арабаджян., Иран: власть, реформы, революции (XIX-XXвв.), с.49.
35. Banani Amin, Modernization of Iran: 1921-1941, p. 82-83, Sh'u fawl' Peter Avery, Modern Iran, p. 296, Иран; Очерки новейшей истории, с. 121.
36. Banani Armin, Modernization of Iran: 1921-1941, p. 82.
37. Banani Armin, Modernization of Iran: 1921-1941, p. 83.
38. Ibid., p.83
39. Ibid., p.84
40. Elwell-Sutton, Modern Iran, p.127.
41. Ibid., p.126, Sh'u fawl' М.С. Иванов, Очерк истории Ирана, с. 343.
42. Иран; Очерки новейшей истории, с. 113.
43. Banani Armin, Modernization of Iran: 1921-1941, p. 84.